



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

1076



1290

$$\begin{array}{r} 208 - 21 \\ \hline 4 - 91 \end{array}$$

2010

900

ԱՐ



7/ХI 1922

ՀԱՅՈՒԹԻՈՅ ԿԱՆԱԿԱ ՎՐԱՅԻ ԲԱՅԼՈՒԹԵՐ

ՀԱՅՈՒԹԻՈՅ ԿԱՆԱԿԱ ՎՐԱՅԻ ԲԱՅԼՈՒԹԵՐ

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՄՐԲՈՅ ԱԿԵՏԱՐԱՐԵՒՆ ՈՐ

ԸՆՏ ՂՈՒԿԱՍՈՒ (Դ. 31—Ե. 16.)

36678ա.հ.

«Դ. 31. Եւ էջ ի կափառնառում ի քաղաքն գալիլիացւոց; և ծւսուցանէր զնոսա ի շաբաթօն: 32. Եւ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշխանութեամբ էր բանն նորա:

«33. Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զորունէր այս գիւի պղծոյ, և աղաղակեաց ի ձայն մեծ: 34. Եւ ասէ. թուլացո, զի՞ կայ մեր և քո, Յիսուս նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ ով ես, սուրբդ Աստուծոյ: 35. Սաստեաց ի նա Յիսուս, և ասէ. պապանձեաց, և ել ի գմանէ: Զգետնեաց զնա գեն ի միջի անդ, և ել ի նմանէ, և ոչինչ վնասեաց նմա: 36. Եւ եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն. խօսէին ընդ միմնանս, և ասէին. Զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ այսոց պղծոյ, և ելանեն: 37. Եւ երթայր

2002

Հոչակ զնմանէ յամենայն տեղիս շուրջ  
գգաւառաւն:

« 38. Եւ յարուցեալ ի ժողովրդենէ ահ-  
տի, եմուտ ի տուն Սիմովնի: 39. Զօքանչ  
Սիմովնի տագնապէր ջերմամը մեծաւ: և  
աղաչեցին զնա վասն նորա: 40. Եկաց առ-  
նմա, սաստեաց ջերմամն, և եթող զնա: և  
վաղլազակի յարեաւ և պաշտէր զնոսա:

« 41. Եւ ընդ արեռն մտանել՝ ամենեքն  
որոց էին հիւանդք ի պէսպէսցաւու քերե-  
ին զնոսա առ նա: Եւ նա իւրաքանչիւր ու-  
մեք ի նոցանէ գնէր ձեռս, և բժշկէր րդ-  
նոսա: 42. Եւանէին և դեք ի բազմաց,  
աղաղակէին, և առէին, եթէ Դու ես որդի  
Աստուծոյ: Եւ նա սաստէր, և ոչ տայր նո-  
ցա թոյլ խօսել, զի գիտէին զնա, թէ Քրիս-  
տոսն է: 43. Եւ իբրև տիւ եղեւ, ել գնաց  
յահապատ տեղի: և ժողովուրդքն իննդրէին  
զնա: եկին մինչեւ առ նա, և արգելուին  
զնա, զի մի գնասցէ ի նոցանէ: 44. Եւ նա  
առէ ցնոսա, Եւ այլոց քաղաքաց պարտ չ-  
ինձ աւետարանել զարքայութիւնն Աստու-  
ծոյ, զի յայն իսկ աւարքեցայ: 45. Եւ քա-  
րողէր ի ժողովուրդոն գտլիւհացւոց:

« Ե. 1. Եւ եղեւ ի խռնել զնովաւ ժո-  
ղովրդեանն, և լսել զբանն Աստուծոյ, և  
ինքն կալր առ ծովակին Գեննեսարեթայ:  
2. Եւ ետես երկուու նտւս, զի կային առ  
ծովակին, և ձկնորսքն ելեալ ի նոցանէ,  
լուանային զգործիսն: 3. Ել նա ի մի նա-  
ւուցն, որ էր Սիմովնի, և աղաչեաց զնա  
սակաւիկ մի տանել ի ներքս ի ցամաքէն.  
Նստաւ և ուսուցանէր ի նաւէ անափ զժո-  
ղովուրդոն:

« 4. Եւ իբրև լուեաց ի խօսիցն, ասէ  
ցՍիմովն խաղացն ի խորն, և արկէք զգոր-  
ծիս ձեր յոլս: 5. Պատասխանի ետ Սիմովն,  
և տու ցնա. վարդապետ, զամենայն գիշերս  
աշխատ եղեաք, և ոչինչ կալաք. բայց վասն  
ոռ բանիդ արկցուք զգործիսս: 6. Զայն  
իբրև արարին, վակեցին ի ներքս բազմու-  
թիւն ձկանց յոյժ, մինչեւ պարպատէին  
ուռկանք նոցա: 7. Եւ ակնարկէին որսակ-  
ցացն ի միւս նաւն՝ գտլ օգնել նոցա: և  
եզին: Եւ լցան երկոքին նտւքն, մինչեւ մերձ  
յրնկղմել նոցա: 8. Իբրև ետես Սիմովն Պետ-  
րոս, անկաւ առ ծունկսն Յիսուսի, և առէ.  
ի բաց գնա յինէն Տէր, զի այր մեղաւոր

եմ ես: 9. Քանզի ահ պատեաց զնաւ: և զամենեսեան՝ որ ընդ նմայն էին, վասն որսոյ ձկանցն՝ զոր ըմբռնեցին: 10. Նոյնպէս և զՅակովբսս և զՅովչաննէս զօրդիսն Զերեգեայ, որ էին որսակիցը Ախմովնի: Եւ ասէց Ախմովն՝ Յիսուս. Մի երկնչիր, յայոմչետէ զմարդիկ որսայցես ի կետնօ: 11. Եւ հանեալ զնաւն ի ցամաք, թուղին զամենայն, և գնացին զշետ նորա:

« 12. Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի ի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամք՝ իբրև ետես զՅիսուս, անկեալ ի վերայ երեսաց, աղաչեաց զնաւ, և ասէ. Տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: 13. Զգեաց զՃեռն իւր, հասոյց ի նաւ, և ասէ. Կամիմ, սրբեաց: Եւ վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն: 14. Եւ նա պատուիրեաց նմաւ. Մի ումեք ասել, այլ թէ երթ, ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան քոյ, որպէս և հրամայեաց Առլուկ՝ ի վկայութիւն նոցա: 15. Եւ յուղէր առաւել բանն զնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց: 16. Եւ նա խոյս

տայր յանապատ տեղիսաւ և կայր յաղօթո»:

Սուրբ Աւետարանի այս ընթերցուածն՝ շարայաբութիւնն է առաջին տետրում զետեղուած ընթերցուածին. Ըսենք այժմ և այս ընթերցուածի թարգմանութիւնն ու ներքին իմաստն:

Դ. 51 Եւ իջաւ և կուիւնասում գաւկիւնացուաց ժակարտն. և շոբաթ օրերու անոնց կուսացներ: 52. Եւ նորս ասուցանելուն վերա կայրանային, վասն ու է էլուստուան ներայի և էր նորս իսուսն:

Երբ նազարէթացիք իրենց զայրոյթն յագեցնելու համար՝ լեռան գլխէն վար պիտի նետէին զՅիսուս, և նա մէջերնէն անցաւ, գնաց իբրև թէ նոցա ձեռքէն թուչէր. այն գնացածովն իջաւ դէպ ի Կափառնաում, և այն տեղ կընակէր. ու շաբաթ օրերն ժողովարանումն կքարողէր. միշտ Աստուծոյ թագաւորութիւնն ուսուցանելով: Մովսէս Աստուծոյ կամքն ու հաճոյքն կուսուցանէր գրաւոր օրէնքներ տալով և այս օրէնքներն՝ իսրայէլի ժողովրդին բարոյականին սահման կդնէին. զոր օրինակ կսահմանէին. թէ ինչ իրաւունք ունին. ինչ պարտք ունին. ինչ պիտի ուտեն, և ինչպէս պիտի ուտեն: ինչպէս պիտի ամուսնանան, և ինչպէս աճեն. ինչպէս պիտի տարածին, և ինչպէս պիտի տիրեն. ինչպէս պիտի գատին և ինչպէս ձշմարտութիւնն պիտի պահին. ինչ պաշտօն պիտի ունենան. և ինչպէս պիտի պաշտեն. ինչ է արդարութիւնը, որըութիւնն ու քաւութիւնը. ինչ է քահանայութիւնն թագաւո-

բութիւնն, սուրբ աղջն, ու սեպհական ժողովուրդն։  
Եւ այսպէս մարդոյ ծնունդէն մինչի գերեզման բո-  
վանդակ կենաց գործն ու բարքն միանդամայն կսահ-  
մանէր, մինչև անգամ կսահմանէր թէ անստուներն  
ինչպէս պիտի գործածեն, և ինչպէս պիտի խնամեն։  
Որով և խրայէլի բովանդակ ազգին կեանքն ու կեն-  
դանութեան գործերն կսահմանէր, մինչև այն աւուր  
համար, որ խրայէլի ժողովուրդը պիտի ձգտէրիմա-  
նալ թէ ինչ պիտի լինի ապագայումն, նոյնակէս այս  
ձգտումէն սահման կդնէ, և կարգելու, որ մի գուցէ  
դիւթերու վհուկներու և կախարդներու դիմեն և մե-  
ռելահարց լինեն. ըստ որում այս բանն անողներն  
Աստուծոյ առջեն պիղծ են, և խրայէլ պիտի  
կորսնցնէ այն պղծութիւններն գործող ազգեր, և  
երկիրն պիտի ժառանգէ, վասն զի Աստուծած ատեց  
այն ազգերու գաբշութիւններն։ Այսպէս ասելէ  
եաբն կսահմանէ, թէ ապագայից գիտութեան համար  
ինչ պիտի անեն Բատ այսմ։

«Կատարեալ լինիւ ու ուէր Աստուծուն առաջը, վասն  
չի այս աղբէն՝ ըստ դուռ պիտի ժառանգէն՝ նուո հայու-  
թեանց և ուէնիւթեանց մորի կանեն. բայց ուն՝ այնուին  
հրաման չպատաս ու ուէր Աստուծուն։ Գու ուէր Աստուծուն։  
ու եղբայրներն ինչ նման մարդու պիտի հանէ, նորան մորին  
արէտ, ամեն ինքանը ինչպէս որ ինդրեցէր ու Տէր Աստուծու-  
թեան։ Քորէնո՞մ ժողովքին օքն իսուիւ. — Մէի ու Աւտուն-  
մէր Տէր Աստուծուն յայելը, և այդ մէծ հոռը շրեանեն։ որ  
չմեռնեն։ — Ես Տէրն ին ասոց, ինչ որ իսուցան,

— Այն աւ նոյն համար մարդուրէ հանեմ իրենց եզրոյներէն  
չըրեւ գլւու, և իս պատրամներու նորա բներանը ուամ, և իսուի  
նոյն հետ, ինչպէս որ պատրամներու նորան։ Սա ենի մինի մարդ՝  
որ վու ինչ որ մարդուրէն իսօսէ իս անունով, գրեմա և «  
Հիւթեամ անուբնուն Բայց մարդուրէն» էնի անհասարութեան  
անէ, և իսուի իս անունով ինչ որ ես չկամացեցի իսօսէ. և  
իսում նև օտար աստուծներու անունով իսօսի, նուղ մեանի  
այն մարդուրէն։ Թէ որ ասէտ յէր սրբածն, ինչպէս գիտուուն  
իսօսւը պը ուէր իսօսւը զի։ Ինչ որ իսօսէ մարդուրէն Տէրոջ  
անունով և նևնէ այս բանն և զերեւի, այս իսօսն և, զը  
ուէրը իսօսուն չի. մարդուրէն իսօսւցաւ անհասարութեամ։  
Ո՞ւ Ներէւ և Նու («Եւցուցէ»)։ (Բ. ՕՐ. Ժ. 15—22)։

Մովսիսի այս պատգամն եթէ լաւ ուշագրու-  
թեամբ կարգանք, ներքին իմաստն այսպէս կելլէ։  
Աստուծած օրէնքը կուտար Խրայէլին Մովսիսի միջո-  
ցաւ։ որ կատարեալ լինին Աստուծոյ առաջ։ Խրա-  
յէլ կվախնայ Աստուծոյ ձայնէն և տեսիլէն, և  
շհամրձակեր այն տեմիլը տեսնել։ Աստուծած ու-  
ղիղ կհամարի ժողովրդեան վախն։ և կիսուտանայ  
շվախցնող տեսիլով և ձայնով տալ իւր օրէնքներն՝  
կատարելութեան օրէնքներն։ Մովսիսի միջոցաւ  
տրուածներէն աւելի կատարեալներն, և ապագայի  
գիտութիւնն։

Ահաւասիկ ժամանակի լրումն հասած է, Քրիս-  
տոս Փրկիս ինքն Աստուծած՝ որ Մովսիսի յայտնու-  
թեան մէջ կիսուէր և իւր պատգամներն կուտար,  
այս կանխագոյն խոստման համեմատ մարդացել է,

յաշխարհ եկել, և մեղմ ձայնով ու քաղցրութեան  
և սիրելի տեսիլով իւր պատգամները կիսուի շա-  
բաթ օրերը ժողովարաններում։ Կուսուցանէ Աս-  
տուծոյ արքայութիւնն։ «ԱԵՌ Շահումուրը ՁԵՐ Տ.Ա-  
ԴՈՒ-ԱՅՆ Է»։ և թէ «ՏԵՌ Է ՁԵՐ Հայրը, ՁԵՐ Շահումուրը,  
ՁԵՐ Փրկութ և հերի վեց։ Կուսուցանէ իսրայէլի ժո-  
ղովուրդին, աղքատներն միսիթարելով հիւանդները  
բժշկելով, գերիներն ազատելով, կուրաց աչքերը  
բանալով մեղաւորաց կապանքներն արձակելով, հոգ-  
ոյ անմահութիւնն ու յաւիտենական կեանքն  
պատկերացնելով, ցանկալի և երջանիկ նկարագրե-  
լով։ Կորպեցնէ դարձեալ նոյն երջանկութեան  
հասցնող բարոյից օրէնքն՝ գերազանցելով քան  
զՄովսէս։ Կորպեցնէ։

«ԳԻ ԱՌ Եղի՛, ինչու ո՞ր յեր երինաւո՞ր հայրը հիւած է։  
«Կառարեւու Եղի՛, ինչու ո՞ր յեր երինաւո՞ր հայրը հոռո-  
րեւու է։ Անդութիւնը՝ որ ընկերատեցութեան և  
հպարտութեան արդիւնքն է կրատապարտէ և զթու-  
թիւնը կղետեղէ մարդկան սրտերում։ Գթութեան  
և սիրոյ համար ստեղծուած մարդկային սրտերն՝ որ  
կայենի մարդասպան հպարտութենէն սկիզբն առած,  
և մինչև ի Քրիստոս տեղի կուտային հպարտու-  
թեան՝ կը յանդիմանուին փրկչին քարոզութեան  
մէջ։ Կյանդիմանէ հպարտութիւնն՝ իրրև ծնունդ  
ստութեան, իբրև արդիւնք և պտուղ ստութեան։  
Կյանդիմանէ և ստութիւնն՝ իբրև կամք նախաշա-  
րին սատանայի, որոյ խաթէութեամբն պատրեցան

մարդիկ և թողուցին կենաց հնազանդութիւնը։ և  
այնուհետեւ տիրապետեց ստութիւնը մարդկան  
սրտերումն, և փոխանակ գթութեան, հպարտու-  
թիւնը զօրացաւ։ փոխանակ սիրոյ և ընկերսիրու-  
թեան, ատելութիւնն ու հակառակութիւնը զօրա-  
ցան։ և փոխանակ կենաց, մահը զօրացաւ մարդկան  
վերայ։ Կուսուցանէր Փրկիչն, թէ մահէն զերծա-  
նելու համար, մերժելու է ստութիւնը։ պիտի,  
թագաւորէ մարդկան սրտերումն ճշմարտութիւնն,  
սէր և գթութիւնն, որ կեանքը զօրանայ և հոգին  
լուսաւորի, մինչև տեսնէ անմահ կեանքն։

Որչափ որ մեղմու կիսուէր կենաց խօսքը՝ ժողո-  
վրդեան ականջին և սրտին քաղցրացնելու, այնչափ  
իշխանութեամբ և զօրութեամբ կիսուէր սուտին և  
սատանային դէմ, որպէս զի հեռանան մարդկան  
սրտերէն։ Փրկչին վարդապետութիւնը քաղցրու-  
թեամբ կլսուի Կափառնաումի ժողովարանումն,  
մինչդեռ նաղարէթի ժողովուրդին՝ թէ և կհասկա-  
նար Փրկչին խօսած ճշմարտութիւնն ու չնորհքն։  
բայց միտք չէր աներ այն չնորհաց վերայ։ և կիսոր-  
հէր, թէ Յովսէփի որդին՝ ինչպէս դիտէ այս  
խօսերն, ուր սորվել է։ Խոկ Կափառնաումի ժո-  
ղովուրդն՝ իշխանութիւն մի կզգաց Փրկչի վարդա-  
պետութեան մէջ և կդանուին մարդիկ, որ կհնազա-  
նդին այս իշխանութեան, ու իբենց սրտերումն կըն-  
դունին գթութիւնն, որով և կղերծանին սատանայի  
տիրապետութենէն, որ ստութիւն է, և իւր հետե-

սողներուն սրտումն կրնակի, կհպարտացնէ, կնախանձեցնէ, մարդասպան կանէ և հիւանդ կանէ:

Փրկիչն՝ մի կենդանի վարդապետութիւն կուսուցանէր. նոյն իսկ Աստուծոյ արքայութիւնը քարոզելով՝ կըսթափեցնէր, կարթնցնէր, հօգի կուտար, կուրութիւնը կըսաւառէր և իւր քարոզած բարոյականին — «Երայ և դնութեան արդիւնքն, կեանքն՝ պարզապէս տեսանելի կանէր: Նորա ազդած լուսոյն մէջ՝ մարմնական ցանկութիւններու վնասներն ու վտանգներն յայտնի կնշմարուէին. յայտնապէս կտեսնէին, թէ ստութիւնը՝ մահը կփութացնէ, ճշմարտութիւնը՝ կեանքը կզօրացնէ: Եւ մարդիկ կմտադրուէին ճշմարտութեան հետեւլ թողուլ ստութիւնն իրենց սրտերէն:

53. Եւ ժողվարանուն մի ճարտ կար, ուր էլեւնէր պէտք դնեն. աղաղակց մեծայան, 54. և ասաց. նուլցո՞ր, Յետուս նաշոքեցի, ինչ իս մեղ և եղան եկար որ իւրանցնե՞ս պէտք դիտեն, բառ ով ես, սորբի Աստուծոյ:

Փրկիչն կուսուցանէր, թէ մահը ստութեան — սատանի արգիւնքն է, իսկ կեանքն՝ ճշմարտութեան — Աստուծոյ շնորհքն է, որ գթութիւն և սէր է: Փրկիչն այս խօսքերէն կզգածուի և դիւահարն. կմիտի դէպ ի ճշմարտութիւն և տեղի կուտայ գթութեան. Սատանան կտեսնէ որ տեղ չմնար իրեն մարդու սրտումն, կանչէ Յիսուսին. «Թոյլ տուր քիչ մը»: որպէս թէ այն խօսքերն՝ բռնել էին սատանայի ձեռքերէն պլնդ:

իրեւ հօգեղէն արարած, կճանաչէ զորդին Աստուծոյ. և կհարցնէ, թէ ի՞նչ կլինի քեզ որ ես այս մարդուն մէջ կրնակիմ: Պիղծ գեին այս աղաղակն լսուեցաւ բոլոր ժողովրդեան մէջ. և տեսան, թէ գեերը չեն հանդարտել Յիսուսի իշխանական վարդապետութեան:

55. Ուստի սաստեց դեպ ի նա, և ասաց. Պապանի՛ և Եւ այդ հարդէն: Դևան այսուեղ մէջուղուածն չեղոնին շորիս պատ, և Եւս անօրմէն: և ոչնչ վնաս կառաւ հարդուածն:

Փրկիչն կսաստէ գեին, որ լուռ կենայ: չկամենար որ գեն հրատարակէ մարդկան մէջ, թէ նա Աստուծոյ որդի է. մարդարէից խոստացած Մեսիայն — Օծեալն է: Ըստ որում Յիսուս պիտի լուսաւորէր մարդկան հօգին, և պիտի ճանաչէին զՅիսուս՝ նորա գործերէն, ինչպէս որ մարդարէները գուշակել էին. ըստ որում և կուսուցանէր Յիսուս ոչ միայն խօսելով, այլ և գործով: Դեւ կհնազանդի Փրկչի հրամանին, և կելլէ մարդէն. որ ցցց մի է, թէ սատանայի բնակարան եղած մարդկութեան՝ այլ ևս կիսափագէր աղատուել նորա ստութենէն և ատելութենէն, և կիսափագէր ճշմարտութեան և աղատ կենաց:

56. Զարմանեւ Եկատ աւենին վլրայ, մէկ մէկու հետ իփսուէն ու իսուէն: ի՞նչ և այս բան, որ իշխանութեամբ և զբութեամբ իստորէ պէտք դւերուն, և իւլլէն: 57. Եւնոր վլրայ, համբաւ կոտրածուեր ուեն ուեղ չառաւին բուլրիւն:

Աղարմանայ ժողովուրդն, և ամենքն կհրատարա-  
կեն այս զարմանալիքն, թէ Յէսոս կոստու գլուրուն,  
և հայոցուքն արդիշներն Գալիլեյ գաւառին ամեն  
կողմերն ամեն գիւղերն կհասնի այս համբաւն,  
ոմանք կիսօսին զարմացմամբ ոմանք կփռւթան որ  
իրենց գիււահարները բերեն, և Յիսուս սաստէ, և  
հալածէ գեերն այսպէս շուտով պատմուեցաւ այս  
սքանչելիքն ամեն կողմերումն:

Կափառնառումի ժողովուրդն հիացած այս սքանչե-  
լիքն՝ փութացին իրենց հիւանդներն բերելու, որ  
բժշկումն իբրև բժիշկ, մեծ բժիշկ ճանաչեցին  
զՅիսուս և հոչակեցին: Միտք անող չեղաւ, թէ  
Սա՝ Մովսէսի գուշակած մարդարէն է, օրէնսդիր  
Տէրն է, որ եկել է և իւր պատգամներն մեղմիւ  
կուտայ իսրայէլի ժողովրդեան, որց նշանն՝ այն  
պիտի լինէր, թէ սասածը պիտի կատարուի. ինչ  
գէպք որ խօսի, պիտի պատահի և լինի: Զհան-  
դաբտեց ժողովուրդն այս սքանչելիքին, և հոչակե-  
լու կփռւթային, և ժողովարանը պարպեցաւ:

58. Եւ այս ժողովուրդն ելած էր. Ոինչնի որունը  
մոտաւ: 59. Աինձնին զուանչը մէջ չէր. իուադն ակէ.  
Նոր համար աշակէցին զըմասու: 40. Աոր մօր կէցաւ.  
սաստեց չէր. և նորուց զնո (չէր): Եւ իսկոյն վէր  
կացաւ հետապնէր նոյս:

Ժողովարանէն գուրս որ ելաւ Յիսուս, Սիմովնի  
տունը մտաւ, ուր ջերմի հիւանդութեամբ կտագ-  
նապէր. մեծ նեղութեան մէջ էր Սիմոնի զոքանչն:

Թերես ինքն Սիմովնն կամ նոյն տան ուրիշ մար-  
դիկներէն կային ժողովարանումն, և տեսած էին  
այն սքանչելիքն, որ սաստելով հանեց զգեստ. այս  
սքանչելեաց տեղեակ եղողներն կաղաշն զՅիսուս  
որ բժշկէ տան հիւանդին: Յիսուս կկանգնի ջերմ  
բռնողին մօտ, և կսաստէ ջերմին. ջերմն ևս կհնա-  
զանդի, և հիւանդն խօսն վեր կելլէ, կառողջա-  
նայ այնպէս, որ ծառայութիւն կանէ եկողներուն,  
հիւրցիթ կպատրաստէ:

Աստուած՝ հիւանդութիւն ստեղծած չէ. մար-  
դիկ՝ իրենք ստեղծել են, իրենց մէջ տեղիք տուել  
են հիւանդութեան իրենց չար գործերով. Աստու-  
ծոյ սահմանած մարդկային բարյականի սահմանէն  
գուրս ելլելով անել հրամայուած գործերն չանե-  
լով և չանելիք գործեր գործելով ժամանակի  
սահմանն ու օրէնքը մտիկ չանելով, և անժամանակ  
կերպով գործելով ինչ որ բնութեան պահանջներն  
են, որով և Աստուծոյ օրհնութիւնը մերժել են  
անձերէն, և սատանայի բնակութեան տեղիք տուել  
են իրենց սրտերումն, որ մարդկան մէջ բնակելով  
ապականել է մարդկան խորհուրդները, և այն  
ապականութեան գարձուցել է խօսքերն. թուլա-  
ցուցել է մարմինն, և հիւանդանոց գարձուցել:  
Փրկիչն՝ որի ներկայութեան չեն հանդարդեր և  
գեերն՝ կսաստէ և ջերման, և կհնազանդեցնէ:  
Նըրանի թէ մարդիկ գիտնային հնազանդել Փրկչի  
հրամանին, կենաց խօսքին. հետեւէին նորա ուսու-

ցած բարսյականին, լնգունէին նորա շնորհըն ու զարգանային. սրտերնին մաքրէին ստութեան ցանկութիւններէն, և Աստուծոյ սիրովն եռային, ու ընկերի սիրովն հանդիսանային՝ լուսաւորուէին, և Աստուծոյ արքայութեան փառացն հաղորդ լինէին հոգւով յորում միայն է յաւիտենական կենաց ճաշակն, որ կգրաւէ կատարեալ հոգիքն. Աստուծոյ արքայութեան, յաւիտենական կենաց և անմաչութեան երանութիւններն կբարողէր Յիսուս. և մարդկան մէջէն դևերն ու նոցա յառաջացուցած ախտերն կիարատէր. Խսկ մարդիկ՝ դեռ ևս չեն հասկանար նորա խօսքը, կեանք տուող խօսքը, և կհասկանան միայն կատարած բժշկութիւնը, բժշկող խօսքը. Հիւանդներն աւելի ևս կզգան. մէ կարօտ են Աստուծոյ խօսքին, որ բժշկուին իրենց տադնապէն. Խսկ որոնք որ ինքզինքին առողջ կըկարծեն՝ դեռ ևս չեն խորհիր ազատուել սատանայի կապանքներէն, չարագործութեան անսանձ գրգիռներէն, զրկող և հարստահարող հպարտութենէն. Սոքա դեռ չեն հասկացել, թէ հոգւով հիւանդ են, և աւելի ևս պէտք և կարօտութիւն ունին Փրկչին կենաց խօսքերն լսելու, որչափ որ այն հիւանդներն:

44. Եւ երբ արևը մանելու վերայ էր, ամեն ո՞ւ ո՞ւ հիւանդներ ունելու գետակ աւասակ ցաներում (բանասած), նորա օրու իբրեւին վնասա:

Ժողովարանումն կատարուած սքանչելիքը տես-

նողներն՝ ամենքը վազեցին գաւառին ամեն կողմերն, հրատարակեցին Փրկչին կատարած բժշկութիւնը, և իրենց ծանօթներուն թելագրեցին՝ որ հիւանդնին բերեն նորա առաջը, որ միայն խօսքով կրժշկէ. Համբաւն ուր որ հասաւ, այն տեղերում գտնուողներն իրենց հիւանդներն առին եկան Յիսուսի մօտ կաղաչէին, որ բժշկէ զնոսա:

42. Եւ նո՞ւ նոցա ամեն մէին վերայ յեւ+ իբրեւ, և իբրեւ վնասա:

Փրկիչն՝ ինչպէս որ կուսուցանէր օգնել կարօտ ընկերին, նզնպէս և կգործէր. և այս ամեն կարդի հիւանդներուն՝ որ առողջութեան և բժշկութեան կկարօտէին՝ կօդնէր. ձեռքը վերանին կրնէր և կրժշկէր անխտիր: Որեկիցէ հիւանդի բժշկութեան պայմանն էր, որ հաւատային Աստուծոյ Օծեալ Փրկչին, և կրժշկուէին. այս հաւատքը կըպահանջէր Յիսուս հիւանդներէն, կամ աղդաց հիւանդներու ծնողքէն. որ Տէր գաւանելով կյայտնէին իրենց հաւատքն, ինչպէս կերեւ. Աւետարանչաց պատմած մասնաւոր բժշկութեանց մէջ Փրկչին պահնջած հաւատքէն:

45. Շատերէն ուները իւլիէն, իաղաղակէն ու իսուէն, նէ Աստուծոյ որդին եւ դու: Եւ նո իսասուեր, և նոյն շեր ուր նոցա՝ որ իւսէն, չի հանձնային վնաս, նէ Քրիստոն եւ

Շատ հիւանդներ կրժշկուին, և դիւահարներէն գեկերը կելլէն, և կաղաղակին, թէ Աստուծոյ որդին է, Քրիստոն է. որոց աղաղակը կարգելէ

Յիսուս, որպէս զի մարդիկ ձանաչեն. զՅիսուս նորա սփոելիք շնորհքէն և լցուէն, և ոչ թէ գեերու քարողելէն:

45. Առ երբ առաջար եղաւ և լուս անապատ որդի ըն  
թիւց. և ժայռվարքները ինչպարէն զնա, եկան մինչև նորու  
օրոն, և իսրաէէնին դաս, որ չկը միա, իրէնին մ:

Ճողովուրդներն որ հիւանդաց բժշկութեամբն  
աւելի զարմացած էին, հիւանդները բժշկելէն ետքն  
ևս կատիպեն, որ իրենց մօտ մնայ Յիսուս, և չե-  
ռանայ: Այս ցանկութիւնն եթէ պարզապէս իրեւ  
մի վարպետ բժիշկ իրենց սահմանումն պահպանե-  
լու միտք չէ: Կնշանակէ: Թէ ժողովուրդն սկսել  
էր զգալ նորա կենաց խօսքի ճաշակն, զգացել էր  
նորա քարոզած հոգւոյն լոյսն ու շնորհըն, և այն  
լոյսն ու շնորհըն իրենց մօտ միշտ ունենալ  
կձգտին:

44. Ե-ՆԱ ՀԱՅԵԿ ՆԱԳՈՅ. Ա-ՐԵԼ Տ-ԱՂՋԱՆԻԵՐՈՒ ԼԱ ԱՐԵՎՈՒ Ե  
+ԱՐԵՎՈՒՄ Ա.ԱՐՄ-ՃՈՅ ԱՐ+ԱՎԱՆԻԵՐԻԱՆ, ԵԼ ԱՅԻՆ ՆԱՊԱՎԱԿԻԱ-  
ԽԻՔԻ-ԵՎԱՅ. 45. Ե-ԳԱՎԱԼԻԵԼ-ԵՎՈՐԴ Ժ-ԱՂՋԱՆԻԵՐՈՒՄ Ք+Ա-  
ՐԵՎՈՒ:

Բայց փրկիչն՝ ըստ որում Խրկուած էր բոլոր ժողովուրդներուն քարոզելու, չլսեց նոցա ստիպմունքին, և սկսեց Գալիլիայի միւս ժողովուրդներուն մէջ ուսուցանել միւնցին կերպով, միշտ Աստուծոյ թագաւորութիւնն ուսուցանելով:

«Եւ առ երբ ժամանեցի առաջ կազմութեան վերա հաղող կիւնաւու էլիս,

“Հայութիւն եղբարին է 2. Տեսաւ երկու համեմուր ու իցուել էն  
Դաշտուի եղբարին ուրացել ելու յինուունելու և դուրսիւնելու  
համարացին է 5. Համեմուր մեջ եւս համ ու Ալմազը էն եր  
և աշխաց զնու ու մ դուր ցաւածէն դեռ է ներս պահե  
հաստաւ և նասէն իսպանաց եր ժայռագրութիւներուն:

Գրկիչը կըսէ ժողովուրդներու խնդիրն, և կգառա  
նայ անապատէն. բայց Կափառնառում չմտներ, կը-  
կանդնի ծովակի ափումն, և կուսուցանէ Աստուծոյ  
արքայութիւնն: Ըստ որում՝ Փրկչին ուսուցած ար-  
քայութիւնն՝ աշխարհի արքայութիւնն չէր, Փրկիչը  
շատ անգամ անազատ տեղեր կդիմէ, այս անգամ՝ ալ  
ծովակի եղերքումն ոտքի վերայ կեցած կուսուցանէ.  
այս՝ թերեւս այն նկատմամբ՝ որ ժողովուրդներն ևս  
միջոց ունենան հարցանելու Յիսուսէն, զի ժողո-  
վարանում քարողած ժամանակն՝ չէին հարցներ  
ուսուցանողին, և միայն իրենց մէջ կմնար, ինչոր  
հարցնել կմտարերէին. կամ թէ մէկմէկու չետ  
ըսելիայն կըրթմնջէին: Թերեւս այս մտքով՝ այս  
անգամ ալ ծովեղերքումն կանգնած կշարունակէ  
ուսուցանել: Երբ խոնուող ժողովուրդներն աւելի  
կշատանան, Փրկիչն այն տեղ կեցող ձկնօրսներուն  
մի նաւը կելլէ. և նաւուն տիրոջը կաղաչէ, որ  
միքիչ ցամաքէն գէպ ի ներս տանի. կչաճի նաւա-  
պետը, և նաւը ցամաքէն կչեռացնէ պահանջանակ  
Փրկիչն տեսնէ բոլոր ժողովուրդները ու առաջնորդները  
ուածում՝ Փրկչի գործն ևս մի ուսանելու օրինակ  
է. այն է՝ ձանաչել ընկերներու լուսաւուրքը վա22:



ձանաշելով նաւատէրին իրաւունքն կաղաչէ, որ մի քիչ ներս տանի. գներուն և հիւանդութիւններուն սաստղ և հրամայող Փրկիչն, այս տեղ կաղաչն աւելին տիրոջը, չհրամայեր: Որովհ հաշտ լնկերվարութեան օրինակ մի կուտայ, թէ Աստուծոյ արքայութեան հնագանդող մարդիկ՝ պարտին ձանաշել իրենց և ընկերին իրաւունքն և ըստ այնմ վարուել, խնդրելով և ոչ պահանջելով, ինչպէս որ սովորութիւն էր այն ժամանակ աշխարհէ իշխանութեան որդիններու բարոյականումն, որ միայն կհրամայէին, կարծելով թէ ամեն իրաւունք իրենցն է, և ընկերն իրաւունք չունի, այլ միայն պիտի հնագանդի: Փրկիչն՝ ինչպէս վայել է Աստուծոյ արքայութեան որդիններուն, ըստ այնմ կվարուի նաւատիրոջ հետ. սիրով կաղաչէ, և նա սիրով կընդունի և կկատարէ:

Փրկիչը՝ ծովէն դէպ ի ցամաք կմկսի խօսել: ծովեղբըում խոնուած ժողովուրդներուն ուսուցանելով. և կուսուցանէ Աստուծոյ արքայութեան անմահութիւնն, և այն անմահ կենացն հասնելու շշմարիտ կեանքն ու ուղիղ բարոյականն, զոր պէտք է պահել այս աշխարհի կեանքում: Աւետարանիչն այս տեղ ևս զանց կանէ դնել: թէ ինչ խօսեցաւ Փրկիչն. բայց Աւետարանի ամրողջ պատկերէն կերեի, թէ Աստուծոյ արքայութիւնը կուսուցանէր: Փրկիչն՝ ամեն անդամ կուսուցանէր Աստուծոյ արքայութիւնը, բայց միւնցն բացատրութեամբ չէր խօսեր ամեն տեղ՝ այլ ունկնդիր ժողովորդեան

բնաւորութեանն համեմատ կխօսէր, այնպէս որ ժողովուրդն հասկանայ. ժամանակ ժամանակ կխօսէր ամենայն պարզութեամբ, որպէս զի երկրագործ ժողովուրդն հասկանայ, և այսպիսի գիպուածում, երկրագործաց ամենօրեայ գիպուածներէն օրինակներ կվերցնէր և կառակէր. նցնպէս նոցա հասկանալի շշմարտութիւններն իրեւ առակ մէջ կբերէր, և իւր խօսքի շշմարտութիւնն կապացուցանէր. ինչպէս կերևի այս՝ լեռան քարոզի մէջ ձեռնարկած առակներէն. իսկ երբ փարիսեցիք և գպիքը ներկայ կլինէին ունկնդիր ժողովուրդներու հետ. այն ժամանակ աւելի ծածուկ միտք ունեցող առակներով կբացատրէր իւր միտքն, որպէս զի նոքա լսեն, և չհասկանան. ըստորում չէին հաւատար Աստուծոյ խօսքին, մանաւանդ թէ կհակառակէին, և կջանային որ Աստուծոյ օրինացն հակառակ ցուցնեն զՓրկիչն և նորա գործերն: Փրկչին ուսուցած այս յայտնի և ծածուկ առակներն և նորա բացայայտ վարդապետութիւնն, մի մի և կտոր կտոր մէջ կրերեն աւետարանիչներն՝ զանազան տեղերում, որոց ամենքն ալ Աստուծոյ արքայութեան մի մի հանգամանքներն կպատկերացնեն. կամ յաւիտենական կեանքն ցանկալի կհանդիսացնեն. և կամ աշխարհիս հոգեոր կենաց պիտոյըններն թեթեցնելով ընկերսիրութեան խաղաղութիւնն ու հանգիստն կը պայծառացնեն, որոց ամենքն ալ մարդուս հոգին այնպէս կդրաւեն, որ աշխարհիս հարստութիւնն,

փառքն ու իշխանութիւնն՝ ունայն և արհամարհելի  
կերեին բոլորովին. և այս երեսյթը տեսնողներն՝  
այլ ևս չեն կարողանար բաժնութիւն Յիսուսէն, որուն  
համար կթողուն ամեն բան՝ ինչ որ պատուական է՝  
ինչք, ստացուածք, ծնողք, կին, որդիք, քյորեր  
և եղայրներ, և կչետեն Յիսուսին, որ նորա  
ուսումն ուսանին, նորա արքայութեան օրէնքնե-  
րուն հպատակին:

Այս տեղ ծովէն գետի ցամաք ուսուցած միջո-  
ցին՝ հաւանական է, թէ կուսուցանէր և յոդնած  
ժողովրդեան վաստակն թեթևնող հաւատոց վար-  
դապետութիւն, նման՝ լեռան քարոզի այն մասին,  
որ կհրամայէ չհոգալ մարմնական պիտոյից համար,  
և չափէն աւելի չյոգնել:

« Այսունուն մի հոդոյութ և մի ասէտ, նու ի՞նչ պէտք ու-  
տանի. իսո՞ւ ի՞նչ պէտք ի՞մնի. իսո՞ւ ի՞նչ պէտք հաքնին: Զի  
այդ ամենն հետառառնելուն ( զլուառառ չհանուղնէլուն )  
ինուրեն. առաջի յեր երի առոր չայլն ի՞տու, նու այդ  
ամենն պէտք է յեւ: Խորդեցն նաև Աստուծոյ արքայունինը  
և նորա արքարքունինը, և այդ ամենն աւ աւելի ի՞րուն  
յէլ: ( Մատթ. Զ. 31—33):

Այս համառօտ խօսքերում բովանդակուած ըն-  
դորձակ իմաստն կրացարէր Փրկիչն և կուսուցա-  
նէր, թէ մարդիկ՝ իրենց մարմնական պիտոյքնե-  
րուն համար՝ չատ քիչ աշխատանքի պէտք ունին.  
ըստորում՝ նոցա ամեն պիտոյքն Աստուած կուտայ  
առանց նոցա ինդրելուն: Աստուած՝ տիեզերաց

օրէնքն կառավարելով՝ արեգական և երկրի շրջանն  
անդադար կհողովեցնէ, և տարւոյն եղանակներն  
անընդհատ կյաջորդեցնէ, ու երկրին պաղարերու-  
թիւնն ամեն տարի առատօրէն կնորոգէ: Մարդիկ՝  
միայն պիտի ժողովին Աստուծոյ պատրաստած պի-  
տոյքներն, և ուտեն խմեն, և հագնին, որուն հա-  
մար շատ քիչ աշխատանք և ջանք է հարկաւոր:  
Խսկ մարդիկ՝ իրենց մաքումն չհաւատալով Աստու-  
ծոյ արքայութեան, և չհաւատալով թէ Աստուած  
է՝ որ կինամէ բոլոր արարածներն, չեն կարողանար  
տեսնել Աստուծոյ ամենաբաւական զօրութիւնն, և  
իրենց քիչ պիտոյքին ետևէ շատ կյոդնեն: Խսկ  
եթէ հաւատան Աստուծոյ արքայութեան, և գործեն  
նորա սահմանած արգարութիւնն, ամեն մարդու ա-  
մեն օրուայ կերակուրն՝ Աստուած կուտայ անպակասու.  
և մարդիկ միայն պիտի ժողովին աւուր պիտոյքին  
չափով՝ որ ամենաթեթէ աշխատութիւն մի է միայն,  
մանաւանդ որ զօսանքի կնմանի քան աշխատութեան:  
Բայց մարդիկ աւելորդներու ցանկո: Թեամբ կաշ-  
խատին չարաչար. և ինչ որ պէտք է՝ զայն միայն  
կվայելեն: և աւելորդները կփչանան. ինչպէս որ  
Անապատումն գիզացող մանանայն՝ շատ ժողովովն՝  
չեր աւելնար, և քիչ ժողովովին՝ չեր պակասեր. խսկ  
միւս աւուր համար եթէ պահէին, կնեխէր, և ա-  
ւելորդի ցանկութեան ունայնութիւնն կյայտնէր:  
Կուտացանէր Փրկիչն, թէ ինչպէս մանանայի տեղա-  
ցած օրերումն՝ ժողովուրդը միայն կժողովէր և կու-

տէրուու որ և իցէ հոգս չունէր, նոյնպէս է և ամեն  
ժամանակ: Անապատում տեղացած մանանայէն ա-  
ւելի բարեբերութիւն կուտայ Աստուած երկրի  
երեսումն ամեն կիմային տակ՝ կազդուրիչ սնունդով.  
բայց մարդիկ աւելորդի ցանկութեամբ կիշացնեն  
Աստուծոյ պարգևն, առանց արդարութեան՝ իրենց  
ընկերները զրկելու չափ աշխատելով: Աստուած  
ամեն տարի առատութեամբ կուտայ արմտիք—հացի  
վերաբերեալ հունտեր, սերմեր, և պտուղներ, նաև  
ամեն տեսակ խոտեր, որոցմով ուտելի անասուններն  
կաձեն կգերանան, և անհատնում ուտելիք կներ-  
կայացնեն: Զորս եթէ մարդիկ իրենց բաւականին  
չափով միայն ժողովին և վայելեն, ամենքին կրաւէ  
և կառաւելու, բայց մարդիկ չարաշար կդորձածեն  
Աստուծոյ բարիքը. չափէն աւելի ամբարելով, և  
փտեցնելով ու նեխեցնելով. անասնոց նորածին ձա-  
գերն՝ դեռ կաթնում մորթելով և ուտելով: Ճիշդ  
այսպէս է մարդկան վարքն և խմիչքի և հագուստի  
մասին:

Փրկիչն ուսուցանելով Աստուծոյ արքայութեանն  
հալատակող և հաւատացող մարդկան դիւրութիւն-  
ներն, թէ նոցա ամեն պիտոյքն Աստուած կուտայ  
իւր ամենախնամ արարչութեան զօրութեամբ, մատ-  
նացոյց ևս եղաւ թերես և ծովակին, որոյ խորքե-  
րումն անթիւ ձկներ՝ ըստ տեսակի կաձէին Աստու-  
ծոյ գրած սահմանին համեմատ, զորս կորսան մար-  
դիկ թեթև ուռկանով որոյ աշխատութիւնն՝ խիստ

թեթև է. փաթթել ուռկանը, և ջուրը նետել. և  
ապա գուրս քաշել լի ձկներով: Եթէ խոնուած  
ժողովրդեան մէջ չկային ձկնորսներ, կային գոնէ  
երկու նաւերու ձկնորսներն, որոնք ևս կլաէին Աս-  
տուծոյ արքայութեան աւետարանին, և թերես չէին  
կարողանար հաւատալ, թէ ձկնորսի աշխատանքն  
խիստ թեթև է: Բայց Յիսուս վերջացնելով իւր  
խօսքը, կսկսի ապացուցանել, թէ ձկնորսի աշխա-  
տանքն՝ խիստ թեթև է. եթէ հաւատան: Թէ Աս-  
տուած է, որ կպատրաստէ նոցա պիտոյքն. և գոր-  
ծով կպացուցանէ ըստ այսմ:

« 4. Աւ երբ իսունին ըւեցոյ առաջ Ունունին Յառաջ + Հ-  
Դ- է խոր (իսուն), և էնթիւնին յէցեւ ուստացու »:

Այսպէս կհրամայէ Փրկիչն, որ տեղն ու տեղն  
ապացուցանէ, թէ Աստուած կպատրաստէ մարդկան  
վերակուրն ընդհանուր ինամքով և թէ մարդիկ  
խիստ քիչ աշխատանքի պէտք ունին իրենց պիտո-  
յիցն համար, եթէ հաւատան Աստուծոյ արքայու-  
թեան և պահեն նորա արգարութիւնն: Ձկնորս-  
ներն՝ հաւատով չեն լսեր Փրկչի հրամանին. և  
կասէ Սիմովն:

« 5. Պատրաստան առաջ Ունուն, և առաջ Նուն Վար-  
դադեր, բուլը իւշելու աշխատեցան+, և ոչինչ չբանեցին+,  
բայց այդ իսունին համար յէն+ և է թեթիւն! բլ:

Սիմովնի այս խօսքն՝ հետեանք է յոգնած մի  
մարդու մտածմունքներու, որոնք կկրկնուին և շըր-  
ջան կառնուն մարդու մոքումն, և կյիշեցնեն այն

ծանր և չարաչար զբաղմունքներն, զոր կրնլ է իւր պիտոյքն ձեւը բերելու համար: Արմովնի այս միեւնոյն մտածմունքներն կմտածեն և այսօր շատ մարդիկ յիշելով իրենց կրած ծանր տառապանքներն զորս կրել են միոյն ապրուստի և զգեստի համար: Մանաւանդ այն կարդի մարդիկն՝ որ օրական պիտոյքն հոգսէն աւելին կջանան, որ հարստութիւն գիշեն իրենց գանձարանումն առանց միտք անելու թէ մարդուս չմնար իւր ձեռք բերած աւելորդ հարստութիւնն, այլ՝ ինչպէս որ մերկ եկել է, այնպէս մերկ կզնայ մարդ՝ թէ կանուխ լինի այն: Թէ ուշ. և աշխարհի հարստութիւններն ինչպէս որ հողէն կելլեն, այնպէս ալ հողին կմնան:

« 6. Զոյս ( յորժեւու յիշեն): Երբ արին մեջ ը լեցուեցաւ նունց բայց մուտքենաւ որդուս որ իարելի էր. մնալ նոյն առանձին էր իարելի որդուս որ իարելի էր. 7. Ա. յ ի անձին որդուսից ընկերներն ու ի միա նաև, որ դան օքնեն նոյն. և եկան. և երկան. աւ լեցուեցաւ. այնոյն որ մնալ ընկերներ մըրս էին »:

2 կնորսներն՝ որ ամերդ գիշերն աշխատել էին և ոչինչ չէին բռնիլ և այս պատճառուաւ չէին յուսար. թէ ձուկ բռնին այն օրն, և առանց ակընկալութեան՝ միայն Փրկչի խօսքը չկոտրելու համար՝ ձգեցին գործիքնին, և ահա տեսան, որ ձկանց բազմութենէն ուռկանը չեն կարող յետ քաշել. կձգեն ուժով, և ուռկանը կպատուի. ձեռքեր ալէտք են, որ շատ տեղերէ բռնեն: 2 կնորսներն՝

որսի բազմութենէն ուրախացած, աչք կանեն ընկերներնուն՝ որ միւս նաւումն էին, և որ կուգան կհանին. կքաշեն ուռկանը ձկները կհանին այնչափ շատ, որ երկու նաւերն ալ կըլեցուին, և այլ ևս կան ուռկանումն կժողովեն ու կդիզեն նաւերուն վերաց գէպ ի վեր շեղակուտած, և ահա նաւերն ընկղմելու կհանին և ձկներ չեն վերջանար: Այսպէս յաջող որս՝ թերևս իրենց կեանքումն տեսած չէին այն ձկնորսներն. մոռացած գիշերային ժամերումն իրենց արած զուր ջանքն ու անօգուտ վաստակն, ուրախութեամբ ներս կժողովէին առատ ձուկն: Եւ երբ ձուկն կաւելնայ, և նաւերումն տեղ չմնար, այն ժամանակն հաղիւ կսկսին միտք անել ձկնորսներն: թէ այս ինչ որս եր, որ պատահեց այս ժամուն, Փրկչին հրամայած ժամուն, և նորա մատնացոյց արած տեղումն: Թերևս խորհեցան, թէ Յիսուս՝ վարպետ ձկնորս է. բայց գիտէին, թէ Նա՝ Յովելիի որդին է, և արհեստով՝ հիւսն. և ձկնորսութիւն երբէք արած չէ. խորհեցան, թէ արգեօք նորա աչքի տեսութիւնը կթափանցէ և ջրերի խորքումն: և կմտաբերեն, որ Նա գէպ ի ցամաք ժողովրդին կնայէր, և կուսուցանէր, և գէպ ի ծովուն խորքերն չնայեցաւ: Ձկնորսութեան մէջ վարպետ լինելու ամեն կէտերն միտք կանեն, և կզգան, որ մարդկային գիտութիւններէ դուրս մի հայեացք է Փրկչին հայեացքը, կը յիշեն նորա վերջին խօսքերն, որ կասէր. — Այս հա-

շայու, թե ի՞նչ պէտք ուտքէ, իսմ ի՞նչ պէտք խմէ, իսմ թե  
ի՞նչ պէտք համնէն. և այսպէս նշելեւ մ' ինըւէն, այլ  
ինըւէն նախ՝ Աստուծոյ, արդայութիւնը, որ ժայ թարտա-  
ռել յէր վէրայ, և աղոտ ինըւէն Աստուծոյ արդարու-  
նիւն. և ենիւ այս երկուուն ինըւէն, այն նիւնայն պէ-  
տոյդներ. և աւելի և աւելի կրթուէն յէղ: — Միտք  
կանէ Սիմովն, թէ Փրկչին այս խօսքերն արտաբե-  
րած միջոցին՝ ինքն ցանկացաւ, որ Աստուծոյ ար-  
քայութեան հպատակի, և միայն Աստուծոյ հրա-  
մայած արդարութեանն հետեւի. և թէ իւր այս  
մոտագրութեանն իսկոյն հետեւեց Փրկչին հրամանն,  
— Յարաշ +լէ՛ ուեղ է իորն, և ժորժէինէր յէցեւ+ որսո-  
ւու: — Եւ աշա իրապէս կպատառուի Փրկչին ուսու-  
ցած՝ աստուածային իմամքն՝ որ պէտք եղածէն  
աւելի կպատրաստէ մարդկային կենաց պիտոյքներն:  
Դարձեալ միտք կանէ Սիմովն, թէ Յիսուսի խօս-  
քերն՝ սոսկ մարդոյ խօսքեր չեն. այս խօսքերն՝ որ  
իսկոյն կատարումն կառնուն՝ Աստուծոյ խօսքեր են,  
երկնքի և երկրի հրամայող Տիրոջ խօսքեր են. այս  
խօսքերն՝ ջրերու խորքումն և ձկներուն հրամայող  
խօսքեր են. յայտնի է ուրեմն, թէ այս Յիսուս  
վարդապէտն՝ մէր րարունիներէն չէ, սա երկնային  
Վարդապէտ է: Սա պիտի լինի Մեսիայն, որուն հա-  
մար մարդարէներն կպատմեն, թէ ժամանակաց լրր-  
մանն յաշխարհ պիտի դայ, հեթանոսաց թագաւո-  
րութիւններուն պիտի յաղթէ, Խրայէլի գերու-  
թեան մնացորդներն պիտի դարձնէ, և Դաւթի թա-

գաւորութիւնը պիտի յաջողեցնէ. սա է Մեսիայն,  
որուն համար մարդարէից նշանակած ժամանակն հա-  
սել է, և որուն համար Յովհաննէս Մկրտիչ վկայեց,  
թէ ձեր միջումն է: Թերեւս այսպէս կիորհիք Սի-  
մովն, և միւնոյն ժամանակն կտարակուսէր՝ իբրեւ  
տկար մարդ վասն որոյ և աչ կուգայ վերան. և  
ինչպէս որ Խրայէլի ժողովուրդն Սինայի ժողով-  
քումն՝ Աստուծոյ տեսելէն և ձայնէն կահաբեկէր,  
նոյն աչն կյիշէ Սիմովն (և ընկերներն), և կասէ.

« 8. Ուժովն Պետրոս երբ ուեղաւ, Յիսուսի ծունդէրն ին-  
չա, և ասուց. Աւելի ժնո՞ նյայն Տէր զի Նեղութ  
անդ ու լու կու »:

Սիմովն Պետրոսի աչն այնչափ ուժգին է, որ  
ինքն հեռանալու մէկդի գնալու չզօրեր. Տիրոջը  
կինդրէ, որ հեռի գնայ իրմէն. և այսպէս կինդրէ՝  
միտք բերելով թէ ինքն մեղաւոր մարդ է, և ար-  
ժանի չէ Աստուծոյ մօտ լինել: Պետրոս՝ իբրեւ մարդ՝  
կցանկանար աշխարհի ամեն վայելչութեան. և իբրեւ  
սոսկական մարդ՝ մատնուած էր ամեն տեսակ նե-  
ղութեանց և տագնապներու. և այս տագնապնե-  
րումն շատ անգամ տրանցած կինէր իւր նեղու-  
թիւններէն, նաև ընդգէմ Աստուծոյ. այսպիսի մեղ-  
քերն կյիշէր, և կասէր. թէ Մեղաւոր եմ ես. և  
ինքն աչն թուլացած, Տիրոջմէն կինդրէր, որ հե-  
ռանայ իրմէն:

« 9. Քանչէ վայել բանեց զնո ամեն կողմէն. և ամենն  
որ նորու ներդն էին, յիներու որովն համար, որն որ բանեցին է

10. Աղջողեւ (վահան բանեւ էր) պատիւ լը և զբովաննես  
շեքեւուն ուրբենիւն, ու Ումանիւն ուրութիցն (ուրու լնիւր)  
էին» :

Միկնոյն խորհուրդներն կխորհեին և Յակովը ու  
Յովաննես, ինչ որ Սիմոնը Պետրոս կխորհեր. և  
միենոյն վախն բռնեց և զնոսա, և նոյնպէս կաղա-  
չեին, որ Յիսուս հեռանայ իրենցմէ. ըստ այնմ, թէ  
մեղաւորներն՝ Աստուծոյ առջեն չեն հանգարտեր:

« 10. Եւ Յիսուս առոց Ումանիւն. Այ' վահան, առիւ  
երան պարբեկ որոշաւ եւ (ուսնեւ) է իւսնա:

Յիսուս Փրկիչ կիարատէ ձկնորմներու վախն, և  
կիսոստանայ իրեն աշակերտ առնուլ զնոսա, որպէս  
զի փոխանակ ձկներն ի մահ որսալու, զմարդիկ  
որսան ի կեանս: Փրկիչն՝ ինչպէս ինքն կուսուցանէր  
զմարդիկ՝ որ իրենց գործերովն հեռանան սատանայի  
հնարած տիրապետութենէն, Ճնշող գերող իշխա-  
նութենէն, և Աստուծոյ արքայութիւնն ընդունին  
իրենց սրտերումն, և Աստուծոյ սահմանած արդա-  
րութեան գործերովն ապրին. այս ուսումը տարա-  
ծելու համար աշակերտներ պիտի պատրաստէր, որոց  
գործն պիտի լինէր, ուսուցանել բոլոր աշխարհի  
մարդկան, թէ աշխարհիս իշխանութեան պատճա-  
ռած զրկանքներէն և տառապանքներէն կղերծանին  
մարդիկ՝ եթէ հպատակին Աստուծոյ արքայութեան  
օրէնքներին, և նոցա հրամայած արդար գործերն  
գործեն. այսպէսով Փրկչի աշակերտներն՝ զմարդիկ  
ի կեանս որսացած պիտի լինէին: Փրկիչն այս խոս-

տումն կանէ Սիմոնին, որ վախիւն կդողար: Ոչ  
միայն Սիմոնին, այլ նաև նորա որսակիցներուն այս-  
պէս կիսոստանայ Փրկիչն. որով և նոցա սրտէն կը-  
փարատի աչն, և կհանդարտին նորա քաղցր կոչու-  
մովն:

« 11. Եւ նույը յունակն հանուն, ամէն բան նույլուն,  
և նորու էրեւն քնացին » :

Զկնորսներն՝ Աստուծոյ արքայութեան կենաց քա-  
րոզը լսեցին. և թէ մարդկային կենաց պիտպ.քներն  
Աստուծած կհոգայ իւր արարչական խնամքովն՝ փոր-  
ձով տեսան. իմացան, թէ Աստուծոյ հրեշտակն կամ  
նոյն ինքն Աստուծած կուսուցանէ իրենց և կիսուի,  
վախցան Աստուծոյ առաջը կենալէ. և միենցն ժա-  
մանակ Աստուծոյ քաղցր կոչումէն հանդարտեցան,  
և իրենց նաւերը ցամաքն համած, այն ահագին ձըկ-  
ներն իրենց տղայոց և ընկերաց կթողուն և իրենք  
երեքն Յիսուսի ետեւէն կերթան: Աստուծոյ կենաց  
քաղցրութիւնն եթէ մի անդամ ճաշակէ մարդ,  
այլ ևս չը կարող հեռանալ այն կեանքէն. հետեւ-  
ցան ձկնորսներն Աստուծոյ կենաց, և օրէ օր կուսա-  
նէին Փրկչին օրինակէն և վարդապետութենէն, թէ  
ինչպէս պիտի ժառանգեն մարդիկ Աստուծոյ ար-  
քայութիւնն ու զերծանին աշխարհիս տափնապնե-  
րէն, մեզ բերէն հեւանդութիւններէն և մահուսնէ:

Զկանց անակնկալ որսն և Յիսուսի կոչումն՝ այս-  
պէս աղդեցութիւն արին ձկնորսներու վերաց, որ  
իրենց բոլոր ստացուածքնին ձգեցին ու Յիսուսի

ետևէն գնացին. այս միւլոյն եղելութիւնը՝ զոր  
մեր աչքին առջևն տեսնելու պէս կիարդանք Աւե-  
տարանումն, մենք որ Քրիստոսի հետեղ ենք,  
գոնէ անունիս այսպէս է, մէր վերայ ի՞նչպէս կաղ-  
դէ արդեօք. կարող ե՞նք մտաբերել, թէ մարդս  
յաշխարհ կուգայ բոլորովին անդէտ և անկարող մա-  
նուկ, և այս մանուկին կերակուրն՝ իսկոյն կաղբերա-  
նայ նորա մօր ստինքներումն. կարո՞ղ ենք տեսնել  
այստեղ, թէ մենք մարդիկս չենք հոգացած այն կե-  
րակրոյ մասին. կարո՞ղ ենք ինդրել, թէ ո՞վէ որ  
կաղբիւրացնէ այն կերակուրը, որով հետզհետէ  
կանանի և կղօրանայ այն տկար մանուկն. կարո՞ղ ենք  
տեսնել արդեօք, թէ ամենալօր Արարին՝ իւր ամե-  
նախնամ զօրութեամբ՝ կարգադրած է այնպէս, և  
Իրենով կաձի մարդ՝ իւր անդէտ անկարող ման-  
կութեան օրերումն՝ յաշխարհ ծնանելու բոսպէէն  
սկսեալ: Եթէ կարողանանք ըմբռնել՝ թէ այս ան-  
կարող մանկութիւնը կղօրանայ և կապրի Աստուծոյ  
խնամքովն, կարող ենք նաև տեսնել. թէ մանկու-  
թիւնն ելած և զօրացած մարդիկն անդամ, թէև  
կաշխատին իրենց պիտոյքին ետևէն, բայց իրենք  
իրենցմէ չեն կարող ապրել, եթէ Աստուծոյ արար.  
չական խնամքն չմատակարարէ նոցա պիտոյքն. ար-  
դարև մարդս կժողովէ իւր հացն ու ամեն պիտոյ-  
քըն երկրի երեսէն, բայց գիտէ՞ մարդ, թէ այն  
պիտոյքն կհասնի ամեն տեղ Արարշական ամենա-  
խնամ զօրութեամբ. եթէ չըուսցնէ Աստուծոյ, ո՞չ

ոք չէ կարող ժողովիել: Խարայէլի ժողովուրդն՝ առ-  
նապատումն ինքն կելլէր և մանանայն կժողովէր,  
կլուէր, կթրէր և հաց կպատրաստէր, և այն հա-  
ցով կմանանք մանանայն տեղացողն՝ Աստուծուծ-  
էր. եթէ Աստուծուծ չտեղար, նոքա ի՞նչ պիտի ժո-  
ղովէին: Մեք քրիստոնեայքս—Քրիստոսի հետեղ-  
ներս, այս իմաստութեամբ նայենք և այս պատ-  
մուած ձկանց որսին վերայ. և հասկանանք, թէ  
ինչպէս կապրեցնէ Աստուծուծ զմարդիկ, և ի՞նչպէս  
կապրին մարդիկ՝ առանց պահելու նորա արքայու-  
թեան օրէնքներն. Այն ձկնորսներն ամբողջ գիշերը  
ծովին երեսը կթափառին, որ միւս աւուր համար  
իրենց ուտեստ պատրաստեն, կամ իրենց պիտոյ-  
քէն աւելի ձեռք բերեն, քաղաքի շուկայում վա-  
ճառեն, և հարստութիւն ու գանձ գիզեն. այս պի-  
տոյքին և կամ աւելորդ հարստութեան ցանկու-  
թեանն հետեւելով՝ գիշերային քնոյ հանգստէն  
ինք զինքնին զրկող մարդիկն՝ ամբողջ գիշերը կաշ-  
խատին, և ոչինչ չեն բոներ, և ո՞չ իսկ իրենց ու-  
տելու չափով: Ինչո՞ւ չեն բոներ: —Վասն զի Աս-  
տուծոյ սահմանած օրէնքէն դուրս կաշխատին: Աչա  
Աստուծոյ օրէնքումն ապրող մարդկան կենաց բա-  
րոյքն և օրէնքն և աշխատութիւնն կուսուցանէ  
Փրկիչն, կլսեն, կըմբռնեն, բայց չեն հաւասար բո-  
լոր սրտով. և Փրկիչն ինքն կհրամայէ աշխատել  
Աստուծոյ արքայութեան օրինաց հրամայած կեր-  
պով. և մի անդամ միայն ուռկանը կձգեն կքաշեն,

և անակնունելի որս կանեն. այնչափ ձուկ կհանեն,  
որ թերեւ բոլոր քաղաքի բնակչաց կրաւականանար.  
թերեւ ծովեղեքում խոնուած բազմութեանն ալ  
կրաւականանար:

Այս իմաստութեամբ կարգանք և լսենք այս սրան-  
շելի որսն, և այս իմաստութեան աչքով տեսնենք  
Աստուծոյ արարչական ամենախնամ՝ զօրութիւնն  
և հաւատանք բոլորով սրտիւ. թէ Աստուած է, որ  
կինամէ զմել և բոլոր արարածները. և թէ մեր  
ջանքերն ի զուր են, զմել չեն ապրեցներ, որչափ  
ալ վաղենք, տառապենք և գիղենք. կապրենք գար-  
ձեռլ Աստուծոյ ողորմութիւնովն, որ ողորմած է. և  
կինամէ նաև ստահակներն, որպէս զի գառնան և  
ճանաշն իրեն և իւր արքայութեան մէջ ապրեն,  
աղատ ամսն տեսակ տառապանքէ. ցաւէ, և մահէ.  
և արժանի լինին անմահ կենացն յաւիտենից:

Թօմափենք մեր սրտերէն աշխարհիս ընչից ադա-  
հութիւնն. հաւատանք Աստուծոյ արքայութեան,  
չե ևնք Փրկչին ուսուցած աւետարանն. սիրենք  
մեր ընկերը մինչեւ իսկ մահ յանձն առնելով. և  
ահա ամեն բան կաւելանայ մեզ: Գործենք մեր գոր-  
ծն ամենայն խաղաղութեամբ. և ձինոյ մներուն հետ՝  
Քրիստոսի արքայութեանն հետենք մինչեւ զուար-  
ճանանք հոգուով ճաշակելով նորա քաղցրութենէն:  
Լուսաւորուենք Աստուծոյ արքայութեան լուսով  
և տեսնենք Աստուծոյ սահմանած արդայութեան  
հաւատարութիւնն, և աշատուինք միանդամ աշխար-

հիս ահէն: Այս իմաստութեան զարթեցուցած հա-  
ւատովն հետևենք Փրկչին՝ ձկնորսներուն հետ միա-  
ցած, և տեսնենք ու լսենք, թէ ինչեր կցուցնէ, և  
ինչ կուսուցանէ. մատղրութեամբ լսենք սուրբ  
Աւետարանի շարայարութիւնը, և Աստուծոյ հոգին  
կառաջնորդէ մեզ հասկանալ իւր հաճոյքն ու  
արդարութիւնն:

« 12. Եւ երբ ուղարկեն մեն իհաներ նա, ահա մի  
տուրդ բորսորութեանն է, երբ ուեսու զբիսուն, երեսն  
վերայ ինկաւ, աղախց դիմուսուն, և ասաց.—Տէր, ենի հո-  
գենասու կորող ես զիս սրբել—: »

Ահա Գալիլիոյ քաղաքներէն մին կհասնի Տէրն, և  
գիմացը կելլէ մի մարդ, որ ոտքէն մինչև գլուխը  
բորոտած է. այս բորոտն արդէն զթիսուս կինտոէր  
հաւատովլ թէ Կա կարողէ բժշկել սա թերեւս ան-  
ձամբ կճանաչէր զթիսուս, և տեսնելուն պէս գետին  
կընկնի երեսի վերայ, և կաղաչէ՝ աղաչելու ամեն  
կերպով. պէտքէ յիշել թէ Հրէայք գետին կընկ-  
նէն միայն Աստուծոյ տապանակին առջեւ տաճարին  
մէջ. այս արարմունքով՝ բորոտն իւր հաւատը կը-  
պատմէ, թէ հաւատայ ինքն, թէ Յիսուս Աստուած  
է և որդի Աստուծոյ, և նորա առջեն երեսի վերայ  
ինկած, կաղաչէ, որ սրբուի: Աստուած, որ գթած  
է, իւր առաջը խօնարհող մեղաւորին և հիւանդին  
կողորմի, չանտեսեր, և չանցներ անհոգութեամբ,  
ինչպէս սովոր են աշխարհասէր մեծամեծներն. այլ՝

« 13. Յիսուս յեւան երիցուց, նորան հասուց, և

ասաց. — ի ամենամայ սրբություն, — : Ե նորամեն ի սկզբն գնաց  
ըստուրություննեն » :

Կխոնարհի Յիսուս, և ձեռքը կերպնցնէ, բորոտին  
կհասցնէ առանց զզուելու, և նորա հաւատոցն պէս  
կասէ. « կիամենամ, սրբուիր » : Ահա այս ներգոր-  
ծութիւնն ևս տեսանք, թէ մեր հիւանդութիւննե-  
րէն ևս կրժշկուենք, ախտերէն կարբուինք, եթէ  
հաւատով լնդրենք Յիսուսէն :

“ 14. Ե - Ն (Ցէսսա) պատուիլց նմ (Բնորդին), “ ը  
ու ուժ շառեւ այլ (ասսա) գնա՞մ, վահանային ցայ առաջ  
շիլց և դաստիարակ ընթայէ արբանածիւն համար, “ ը նուու  
լու վայութեա, ինչպէս ոք Արքաւուն հրամայեց ”

Փրկիչն՝ այն անտանելի բորբոքութիւնը կարքէ, և  
կպատուիրէ, որ ոչ ոքի չասէ, թէ ինչպէս բժշկուեցաւ. այլ երթայ նախ Աստուծոյ օրէնքը կատարէ,  
ինչպէս որ Մովսիսի ձեռքովն հրամայուած է: Որ և  
իյէ ախտէ սրբուողն՝ Աստուծոյ օրինաց պահպանութեան  
պիտի զգուշանայ, որ այլ ևս չբռնուի այն  
ախտէն: Փրկիչն կպատուիրէ, որ ոչ ոքի չասէ, թէ  
ինչպէս բժշկուեցաւ, ըստորում ուր որ կդնար, բարձ-  
րութիւնն կյածախէր նորամօտ՝ որպէս զի բժշկութեան  
սբաչելիքը տեսնեն: իսկ Փրկիչն աւելի ևս  
կփութար որ Աստուծոյ արքայութեան խօսքը լսէին  
և ուսանէին: և Աստուծոյ որդեգին հաւատային:

Որ քաղաք որ կմտնէ Յիսուս, այն տեղ կժողովին  
և շրջակայ գիւղերէն մեծ բազմութեամբ։ որպէս  
զի նորա քարոզը լսեն և իրենց հիւանդութիւններէն  
բժշկուին։ Կուսուցանէ Յիսուս անդադար, և կաւե-  
տէ, թէ Աստուծոյ արքայութիւնը մօտեցել է,  
և հիւանդներին կրծշկէ։

Հետեւնք Փրկչին, ինչպէս հիւանդներն կհետեւեին  
բժշկութիւն խնդրելով։ Հետեւնք, և նորա կեանքն  
ու լցոն ինդրենք. և նորա հաւատովն ապրենք ի  
մահուանէ ի կեանսն յաւիտենից։

« 16. Ե - նո ծառելուակեա իւրելուար ուեալ է յարեւ և բնակեած  
ուեղէը, և ապահովէ իւրելուար » :

Հետևենք մենք ալ Փրկչի օրինակին, և աղօ-  
թենք.—Երկնաւոր Հայր, սրբէ՛ մեր բերանը, որ  
արժանապէս Հայր անուանենք զքեզ. Թող գայ քո  
արքայութիւնը, և երկրի վերայ ալ մեր մէջն ալ  
թող կատարուի կամքդ, ինչպէս որ երկնքում կկա-  
տարուի. Մեր օրական ապրուստն՝ որ քո ամենա-  
խնամ զօրութենէն կալբերանայ միշտ՝ այսօր ալ՝  
տուր. Մեր յանցանքները ներէ՛ մեզ, ինչպէս մենք  
կներենք մեզ մեղանչողներին. Փորձութեան մէջ  
մի խրկեր զմեզ այլ չարէն փրկէ, զի կարող ես,  
արքայութիւնն ալ քուկն է, զօրութիւնն ալ քուկն  
է, փառքն ալ քուկն է:

С.Р.А. НУОЛННАЯ БИБЛИОТЕКА  
TIFLIS  
7/XI 1922

Ի Տպարանի Ա. Կարուղիկի Եշտիանի Հ. Ա. Խ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ. Ա. Վ.

շատ է սփառված կամ յու զին պետք է  
ու բարեկ չկա Այս ըստ պատճեղութեա  
ու այս ուժը անդ պետք է այսպիսի կա  
յա աշխ չկա յու լոյն պահ է ու պատճեղ  
ու անգույն ու արքայի պահ հայուս ու ա  
ման ու ու անգույն մահաց ու անգու  
յա պահ անց ու անգույն ամայա ու անգու  
յա պահ անց ու անգույն ամայա ու անգու

20 Aug. 1



1076

ՕՐԵԱ ՊՈՏՈՒ

1076



